ծխական մոլլայի ներկայութիւնը շարիաթով պարտաւորւած չէ անուանակոչելիս և թլպատելիս նորածնին, ուստի շատ ծնունդք խուսափում են մատենում գրուելից։

Մատենագրութիւնը մեռեալների համար առաւել լաւ է պահւում շնորհիւ ոստիկանական միջոցների, վասնորոյ և երեւում է մի քանի գաւառներում պակասումն բնակչաց։

Այս հաշուեառութեան նայեած և հոգեւոր վարչութիւնից և ոստիկանական դիւանատներից ստացուած տեղեկութիւններին՝ ծնուողների թիւը եղել է 14,865, որոնց մէջ 8,338 տղայք և 6,526 աղջիկ, այսինքն 100 աղջկայ վերայ ընկնում է 133,2 տղայ — երեխայ։

Ծնուողների թիւը քաղաքներում և գաւառներում այսպէս է.

	Ուստը	Դուստը	Երկուքս
Բագու քաղաքում	1,127	1,006	2,133
Ղուբայ „	89	91	180
Լենքորան „	31	49	80
Շամախի „	163	142	305
Բաղուայ գաւառում	642	441	1,083
Ղուբայու „	2,069	1,672	3,741
Լենքորանու „	626	412	1,038
Շամախու „	1,537	1,085	2,622
Գեօկչայու „	1,433	1,164	2,597
Ջաւատու „	621	464	1,085
Գումարն է քաղաքներում	1,410	1,288	2,698
„ գաւառներում	6,928	5,238	12,166
Ընդ ամենն է նահանգում	8,338	6,526	14,864

Վերոյիշեալ ցոյց տուած պատճառներից երեւում է թէ՝ Բագուայ նահանգի ծննդաբերութիւնը շատ սակաւ է, այնպէս որ 1000 մարդի վրայ գալիս է միայն 19,1 ծնունդ այսինքն,

	Ծնունդ
Բագու քաղաքում	19,8
Ղուբայ „	11,0
Լենքորան	7,2